

Յիշեալ կառավարութիւնը իր գործունէութեան չափանիշը ցոյց առաւ, պատերազմական ատեանին առջեւ զրկելով անմեղներու այս խումը՝ զանոնք դատապարտել տալու նպատակով:

Գ.

Պատերազմական Ատեանը

Պատերազմական Ատեանը կազմող սպաներու պատ-
ւաւորութիւնը և պարկեշտութիւնը վիրաւորող ոչինչ
պիտի ըսեմ: Սակայն, պէտք է յայտարարեմ որ անոնք
չունէին բաւարար չափով օրինական և քննչական ծա-
նօթութեանց զարգացումը: Չեմ կրնար նմանապէս իմ
զարմանքս ծածկել այն իրողութեան որ միամտութիւնն
ունեցան իբր դատական հիմ ընդունելու՝ տեղացի
բարձր պաշտօնեաներուն և ժողովուրդի զանազան
խաւերուն կողմէ պատրաստուած դատախազներու բե-
րած սխալ վկայութիւնները՝ մէկ կամ ամբողջ, մեծ ու
պզտիկ բոլոր գործերուն մէջ, այնքան խոր կերպով
ընդելուզուած էին:

Ատանայի պատերազմական ատեանի վճիռները
արուած ըլլալով այս հիմերուն վրայ, բնականօրէն
զուրկ են դատաստանական և օրինական արժէքէ:

Վեց Հայեր յիշեալ ատեանին կողմէ դատապար-
տուած են մահուան՝ Օհան Օղլու խան կոչուած խանի
մը մէջ յիմնեակ մը իսլամներ սպաննած ըլ ալու յանցան-
քով: Սակայն զարմանալի է որ նկատի չէ առնուած
թէ, 1. Խնդրոյ առարկայ սպաննուած իսլամները այդ
խանին մէջ բնակուցներ չէին: 2. Թէ անոնք կասկա-
ծելի մարդիկ էին, քաղաքին զանազան թաղերէն հա-